«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր, բնագիտության ամբիոն

ՔԻՄԻԱ՝ 8-րդ դասարան

Թեմատիկ աշխատանք, չափանիշ Ա

Թեմա՝ Էլեկտրոլիտային դիսոցում, նյութաքանակ

Սան Խումբ 2020 թ.

1. Ո՞ր նյութերն են կոչվում թթուներ:

2. Դասակարգել հիմքերը, յուրաքանչյուր տեսակից բերել 2-ական օրինակ:

3. Առանձնացնել հետևյալ նյութերն ըստ համապատասխան աղյուսակի:

$MgSO_4$ HCl Na_2SO_3 LiOH P_2O_5 $AlBr_3$ H_3PO_4 $Cu(OH)_2$ Na_2O NO_2 HNO_3

Օքսիդներ	
Թթուներ	
Հիմքեր	
Աղեր	

4. Կազմել հետևյալ նյութերի քիմիական բանաձևերը:

Կալցիումի նիտրատ

պղնձի II հիդրոքսիդ

երկաթի(II)սուլֆիդ

ալյումինի օքսիդ

ֆոսֆորական թթու

ծծմբաջրածնական թթու

5. Գրել հետևյալ նյութերի անվանումները:

Na_3PO_4

$Zn(OH)_2$

$MgSO_4$

H_2SO_3

6. **Ընտրեք ճիշտ պատասխանը:**

Ի՞նչ գույն է ստանում լակմուսը թթվային միջավայրում:

Ի՞նչ գույն է ստանում ֆենոլֆտալեինը հիմնային միջավայրում:

Ի՞նչ գույն ունի մեթիլօրանժը չեզոք միջավայրում:

7. **Համապատասխանեցրեք մեծություններեն իրենց չափման միավորների հետ:**

Նյութաքանակ	չունի չափման միավոր
Զանգված	գ/մոլ
Մոլային զանգված	մոլ
Հարաբերական մոլեկուլային զանգված	գ

8. **Քանի՞ գրամ է 0,4 մոլ ցինկը.**

Պատ.՝

9. **Երկաթի $1,204 \cdot 10^{24}$ ատոմների նյութաքանակը հավասար է/ պատասխանում գրել միայն թիվը/.**

Պատ.՝

10. **.Գտնել 3 մոլ կալցիումի կարբոնատի ($CaCO_3$) զանգվածը / պատասխանում գրել միայն թիվը/:**

Պատ.՝

11. Կազմել ցինկի հիդրոքսիդի բանաձևը և հաշվել այդ նյութի մեջ թթվածնի զանգվածային բաժինը (%) / պատասխանում գրել միայն թիվը/:

Պատ.՝

12. H_3PO_4–ի որոշակի զանգվածում պարունակվում է $4,816 \cdot 10^{23}$ մոլեկուլ: Որոշել H_3PO_4–ի զանգվածը (գ) / պատասխանում գրել միայն թիվը/:

Պատ.՝